կղների վարչութիւնների մէջ։ Սինօդը լսելով այդ առաջարկը տուեց իր համաձայնութիւնը, եթէ միայն թեմական իշխանութիւնը, ծխական համայնքի քահանան համաձայն են գանձարկղ բանալու իրենց ծխում։ Առ այժմ որոշուած է նման ձևի գանձարկղներ բանալ 2000 ծխերում։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

Հռոմի ներկայ պապ Բենեդիկտոս ԺԵ-րդը իրեն յայտնապէս Միջին Եւրոպայի պետութիւնների կողմնակից է ցոյց տալիս։ Իր նախորդ Պիոս Ժ-րդը միանգամայն հակառակ էր պատերազմին. երբ Աւստրօ-Ունգարիայի դեսպանը ներկայացել է իրեն և խնդրել, որ օրհնէ զօրքին, պապը պատասխանել է—ես չեմ կարող օրհնել այս պատերազմը, որն ամբողջ Եւրոպային դժբախտութիւն է բերում։

Պիոսի ընտրութեանը ջերմ կողմնակից է եղել Ֆրանց-Յովսէփ կայսրը, որն ըստ աւանդական սովորութեան, պապի ընտրութեան ժամանակ ճնշում է գործ դրել և իր թեկնածուն անցկացրել։

Պիոսը առաջ գիւղական համեստ քահանայ է եղել. այդ համեստութիւնը պահել է նա պապական աթոռը բարձրանալուց յետոյ։ Իւր կտակում գրել է.

—Ես ծնուել եմ աղքատ, ապրել եմ աղքատ, մեռնում եմ աղքատ։ Իմ յաջորդին խնդրում եմ, եթէ յարմար կգտնէ, թոշակ նշանակէ ամսական 300 ֆրանկ իմ երկու քոյրերին և ազգականուհուն, որոնք Նեղութեան մէջ են։

Բենեդիկտոս ԺԵ-ի ընտրութիւնը բաւական աղմկալի է եղել, սրա կողմնակիցները միջոցների մէջ խտրութիւն չեն դրել, տարածել են հակառակորդ թեկնածուների մասնաւոր կեանքը նկարագրող բրոշիւրներ։ Նոր պապը իր անունն ընտրելիս (կարդինալական անունը եղել է Դելլա Զեզա) յատկապէս ընտրել է Բենեդիկտոս անունը, որով ցոյց է տուել, թէ ինքը շարունակող է Բենեդիկտոս ԺԴ-րդի գործունէութեան։

Նոր պապը աղնուական աւանդութիւնների և դաղափարների ներկայացուցիչ է և վերջ է տուել արդէն Պիոս Ժ-րդի ժամանակ Վատիկանում իշխող նահապետական պարզ կեանքին։

Բենեդիկտոս ԺԵ-րդը հմուտ քաղաքագէտ է և աշխատում է բոլոր պետութիւնների ներկայացուցիչների հետ լաւ վարուել. թէև պարզ երևում է, որ իր համակրանքը Գերմանիայի և Աւստրիայի կողմն է։